ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1

20.12.2021թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2021/1Ն ծածկագրով Երևանի բուսաբանական այգու տարածքում անտառպուրակի կառուցապատման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք. Երևան **«29» «04» 2022թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Օհանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 20.12.2021թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2021/1Ն պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5, 7.15 կետերը և ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 599-Ն որոշումը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

- Հաստատել 20.12.2021թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2021/1Ն պայմանագրի Հավելված N 1.1-ը նոր խմբագրությամբ, համաձայն սույն համաձայնագրի N 1 Հավելվածի:
- Հաստատել 20.12.2021թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2021/1Ն պայմանագրի Հավելված N 2-ը համաձայն սույն համաձայնագրի N 1 Հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 20.12.2021թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2021/1Ն Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Երևաննախագիծ» ՓԲԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ք. Երևան, Փ.Բուզանդի 1/3
ՀՀ կենտրոնական գանձապետարան	Հ/Հ՝ Էվոկաբանկ
ՀՀ 900011038396	ՀՀ 1660000215670100
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 02500241
գլխավոր քարտուղար	Տնօրեն Ս.Օհանյան
Ա. Երիցյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2021/1Ն գնման պայմանագրի
« » « » 2022թ. Կնքված
Թիվ 1 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Երևանի Բուսաբանական այգու տարածքում անտառպուրակի կառուցապատման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների

(Ընդհանուր)

Ծրագրի անվանումը	Երևանի Բուսաբանական այգու տարածքում անտառպուրակի կառուցապատում
Ֆինանսավորման աղբյուր	2022թ. ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Ծառայության անվանումը	Երևանի Բուսաբանական այգու տարածքում անտառպուրակի կառուցապատման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակում
Ծառայության նպատակը	Երևանի Բուսաբանական այգու տարածքում ստեղծել անտառպուրակ
Նախագծողին ներկայացվող հիմնական պահանջները	Նախագծման աշխատանքների արդյունքում պետք է ձևավորվի օրենսդրությամբ սահմանված պահանջներին և նորմերին, ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջներին և էսքիզային նախագծին համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փաթեթ, որը ներառում է՝ • Ընտրված տարածքի գեոդեզիական/ տոպոգրաֆիական հանույթի կազմում, • Ընտրված տարածքի երկրաբանական հանույթ, երկրաբանական եզրակացության տրամադրում, • Տարածքում առկա ապամոնտաժման ենթակա շինությունների, կառույցների ցանցերի սխեմայի պատրաստում, • Գլխավոր հատակագծի էսքիզային նախագծի մշակում, ներառյալ զոնավորում, հոսքերի ճանապարհային ցանց, կառույցներ, ավտոկայանատեղի, կոմունիկացիաների հատակագծեր, փոքր ճարտարապետական ձևեր, ցանկապատեր, • Ճանապարհային ցանցի մշակում, այդ թվում՝ ճանապարհների, ճեմուղիների, արահետների, վագքուղիների, հեծանվաուղիների և ավտոկայանատեղերի նախագծեր, • Հողային աշխատանքների նախագիծ, ներառյալ քարտեզագրում, հանույթի և ետլիցքի ծավալների հաշվարկ, լայնական կտրվածքներ, տիպային կտրվածքներ բոլոր տեսակի ճանապարհների համար, անհրաժեշտության դեպքում հենապատերի նախագծեր, • Կանաչապատման նախագիծ, ներառյալ բուսատեսակների ընտրությունը, ծառատունկի սխեմա, մասնագրեր, թփերի տնկման և խոտածածկի իրականացման նախագծեր (Դենդրոնախագիծ): Դենդրոնախագիծը, այդ թվում՝ բուսատեսակների ընտրությունը պետք է համաձայնեցվի ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հետ, • Ջրային ռեսուրսների բացահայտում, ջրօգտագործման հաշվարկ, պոմպակայանի, խորքային հորի և ջրավազանի կազմակերպում, տեխպայմանների հարցում, ոռոգման ցանցի նախագիծ, տեխպայմանի հարցում, • Ջրահեռացման, ջրամատակարարման և կոյուղու համակարգերի մշակում (խմելու ջրի և ջրավազանի համար), • Էլ.հոսանքի սնուցման և տարածքի լուսավորության նախագիծ, տեխպայմանի հարցում, • Ցածր լարման ցանցի, այդ թվում՝ տեսահսկման և ահազանգման համակարգերի նախագծում, • Կառույցների, այդ թվում՝ մուտքերի/ելքերի տաղավարների, սանհանգույցների

	ճարտարապետական և կոնստրուկտորական նախագծերի մշակում, • Լանդշաֆտային դիզայնի, այդ թվում փոքր ճարտարապետական ձևերի մշակում, անհրաժեշտության դեպքում ցանկապատման նախագիծ, • Ծավալաթերթերի և նախահաշիվների պատրաստում, • Հիմնական հուշակոթողի աշխատանքային նախագծի մշակում: 2. Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն: 3. Նախագիծը կազմելուց հետո համաձայնեցնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Երևանի քաղաքապետարանի հետ: 4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը, նաև ռուսերեն տարբերակով, ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և Երևանի քաղաքապետարան, 5. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով: 6. Ծավալաթերթ-նախահաշվում գումարներն առանձնացնել ըստ աշխատանքների տեսակների և դրանց ընդհանուր գումարի համեմատական տոկոսները: 7. Վճարումը կատարվում է 30%՝ որպես կանխավճար՝ անհրաժեշտ ենթակապալային աշխատանքների պատվիրման համար, իսկ մնացած գումարը՝ կտրամադրվի փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո: 8. Նախագծման աշխատանքներին զուգահեռ կատարողը պարտավոր է ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) գործընթացի իրականացում՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում: 9. Նախագծողը փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից կրկնակի փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտության ծագման դեպքում, վճարում է կրկնակի փորձաքննության իրականացնելու համար անհրաժեշտ գումարը: Եթե փորձաքննության ընթացքում հայտնաբերված բացթողումների ու սխալների ուղղումը չի ենթադրում հիմնական նախագծային լուծումների փոփոխում, ապա նախագիծը ճշտվում և լրացվում է աշխատանքային կարգով, որից հետո տրվում է վերջնական փորձագիտական եզրակացությունը: Այդ դեպքում նախագիծը կրկնակի փորձաքննության չի ներկայացվում: Եթե նախագիծը վերադարձվում է լրամշակման, որից հետևում է, որ նախագիծը ենթակա է լրամշակման՝ ըստ եզրակացությունում ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, որից հետո ճշտված և լրամշակված նախագծային փաստաթղթերի մասով այն պատվիրատուի կողմից ներկայացվում է կրկնակի փորձաքննության: Նախագծման ծառայություններ մատուցող ընկերությունը պարտավոր է պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում լրամշակել նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ պայմանագրով ստանձած պարտավորությունների շրջանակում: Սույն դրույթի խախտումը կարող է ևս պատճառ հանդիսանալ պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:
Նախագծող անձնակազմի կողմից պահպանման ենթակա նոր տեսակի կորոնավիրուսայի ն հիվանդության (COVID-19) տարածումը կանխելուն ուղղված կանոններ	Որակյալ ծառայություն մատուցելու նպատակով Նախագծող կազմակերպության ղեկավարը պետք է ապահովի համապատասխան անձնակազմ՝ բաղկացած որակավորված և ընդունելի փորձառություն ունեցող այնպիսի մասնագետներից, որոնք ունեն համապատասխան կարողություններ տեխնիկական բնութագրով սահմանված պարտականություններն ու գործառույթներն ապահովելու համար: Հիմնական անձնակազմում ներգրավված մասնագետների փոխարինումը կարող է Նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխելու և աշխատողների համար անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ ապահովելու նպատակով կազմակերպությունները պետք է առաջնորդվեն հետևյալ հիմնական կանոններով՝ • Ապահովել պայմաններ՝ ձեռքերի կանոնավոր և մանրակրկիտ լվացման և չորացման համար: Աշխատավայրում ապահովել ջրի և օճառի, ալկոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչների, եռաշերտ դիմակների, ձեռնոցների առկայությունը: • Ապահովել աշխատողների կողմից դիմակների կրումը: • Ապահովել փակվող աղբամաններ՝ օգտագործված դիմակները նետելու համար: • Յուրաքանչյուր աշխատողի ջերմությունը չափել օրական եկու անգամ (հեռավար կամ անհատական օգտագործման ջեմաչափերով, այդ թվում՝ աշխատակիցների անձնական

	ջերմաչափերով), որից մեկը աշխատակցի անշխատանքի ներկայանալու ժամանակ, մյուսը աշխատանքի վայրից հեռանալու ժամանակ՝ կատարելով համապատասխան նշումեր գրանցամատյանում: Բաձր ջերմության աշխատակցին հեռացնել աշխատանքի վայրից, հորդորելով ինքնամեկուսանալ: • ՀՀ առողջապահության նախարարի՝ 2020 թվականի մարտի 16-ի N 977-Ա հրամանի համաձայն՝ սահմանել կանոններ և ընթացակարգեր՝ օրական առնվազն երկու անգամ սահմանված ժամերի ախտահանելու տարածքը (այս դեպքում աշխատանքային ճամբարների տարածքը)՝ դռները, բռնակները, սեղանները, ձեռքով հաճախակի հպման մակերեսները – սարքերի մակերեսները, լոյսի անջատիչները, սարքավորումների վրայի բռնակները, հեռակառավարման վահանակները, ընդհանուր օգտագործման հեախոսները, համակարգիչները, ստեղնաշարերը և մկնիկները), սանհանգույցները: • Ախտահանման համար կիրառել քլորի հիմքով կամ 60%-90% սպիրտ պարունակող ախտահանիչ նյութերը՝ նյութին կից մեթոդական ուղեցույցին համապատասխան: • Ապահովել աշխատատեղերի միմյանցից նվազագույնը 2 մետր հեռավորությունը (ըստ Առողջապահական համաշխարհային կազմակերպության ցուցումների): • Անձնական (դրսի) և աշխատանքային հագուստի պահպանման համար ապահովել արտահագուստի (սանիտարական հագուստի) համար նախատեսված հանդերձապահարաններ: • Աշխատավայրում վիրուսով ախտահարված աշխատակից ունենալու մասին տեղեկատվություն ստանալու դեպքում անհապաղ առանձնացնել այն անձանց շրջանակը, ովքեր շփում են ունեցել վարակակիր անձանց հետ և հայտնել Պատվիրատուին, ապահովել տվյալ անձանց մեկուսացումը: • Աշխատակազմում վարակի կասկածով աշխատակից ունենալու դեպքում զանգահարել Առողջապահության նախարարության թեժ գիծ, հնարավորության դեպքում անմիջապես ախտահանել այն տարածքը, որտեղ աշխատել է աշխատակիցը, ինչպես նաև ցանկացած այլ տարածք և մակերես, որը կարող էր հասանելի լիներ տվյալ աշխատակցին:

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	Ավարտը
Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց պահից	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2022թ. հունիսի 30-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011038396
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Երևաննախագիծ» ՓԲԸ
ք. Երևան, Փ.Բուզանդի 1/3
Հ/Հ Էվոկաբանկ
ՀՀ 1660000215670100
ՀՎՀՀ 02500241

Տնօրեն Ս.Օհանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2021/1Ն գնման պայմանագրի
« » « » 2022թ. Կնքված
Թիվ 1 Համաձայնագրով
Հավելված թիվ 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգմանի (CPV)	Գնման ենթակա ծառայությունների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	71241200	Երևանի Բուսաբանական այգու տարածքում անտառպուրակի կառուցապատման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման ծառայություններ				44 486 000	44 486 000	44 486 000	44 486 000	44 486 000	44 486 000	44 486 000	44 486 000	44 486 000	44 486 000

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011038396
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Երևաննախագիծ» ՓԲԸ
ք. Երևան, Փ.Բուզանդի 1/3
Հ/Հ Էվոկաբանկ
ՀՀ 1660000215670100
ՀՎՀՀ 02500241

Տնօրեն Ս.Օհանյան

(ստորագրություն)

Կ.Տ.